ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐ

---

# Հ Ր Ա Մ Ա Ն

«15» փետր. 2017 թ. N 45-Ա/1

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆԸ ՀԱՆՁՆՎԱԾ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋՕՐՅԱ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2002 թվականի նոյեմբերի 14-ի N 1821-Ն որոշմամբ հաստատված ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կանոնադրության 12-րդ կետի դ) ենթակետով և հիմք ընդունելով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2016 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 116-Ա/1 հրամանի հավելվածի 1-ին կետի 1.1 ենթակետի պահանջը՝

### ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայությանը հանձնված երեխաների խնամքի և պաշտպանության շուրջօրյա հաստատությունների վերակազմակերպման ճանապարհային քարտեզը՝ համաձայն հավելվածի:
2. Սահմանել, որ սույն հրամանի 1-ին կետով սահմանված ճանապարհային քարտեզի համաձայն՝ նախարարության ենթակայությանը հանձնված երեխաների խնամքի և պաշտպանության շուրջօրյա հաստատությունների վերակազմակերպման ընթացքում երեխաների մուտքը հաստատություններ դադարեցվում է:
3. Նախարարի տեղակալ Ա. Մարգարյանին՝ ապահովել սույն հրամանի հավելվածով հաստատված ճանապարհային քարտեզի իրականացման գործընթացը և պարբերաբար նախարարին զեկուցել կատարված աշխատանքների մասին:

Ա. ԱՍԱՏՐՅԱՆ

**Հավելված**
Հայաստանի Հանրապետության աշխատանքի
և սոցիալական հարցերի նախարարի Տարրի 15
2017 թվականի թիվ 45-Ա/Կ հրամանի

**ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՔԱՐՏԵԶ**

**Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայությանը հանձնված երեխաների խնամքի և պաշտպանության շուրջօրյա հաստատությունների վերակազմակերպման**

| Հ/Հ | Միջոցառման անվանումը | Ակնկալվող արդյունքը | Պատասխանատու կատարող | Համակատարող | Ժամկետները | Ֆինանսավորման աղբյուրը |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Նախարարության համակարգի երեխաների խնամքի և պաշտպանության շուրջօրյա հաստատություններում (այսուհետ՝ հաստատություն) խնամվող երեխաների և նրանց ընտանիքների կարիքների խորը գնահատում (համաձայն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2015 թվականի հուլիսի 10-ի N 105-Ա/1 հրամանով հաստատված Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, խնամքի և պաշտպանության հաստատություններում գտնվող երեխաների և նրանց ընտանիքների կարիքների խորը և համապարփակ գնահատման մեթոդաբանության): Գնահատված կարիքներին համապատասխան յուրաքանչյուր | Գնահատված են հաստատություններում խնամվող երեխաների և նրանց ընտանիքների կարիքները, առկա է երեխաների անհատական սոցիալական ծրագրի փաթեթը: | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչություն | Սոցիալական աջակցության տարածքային գործակալություն (բաժին), Մարզպետարաններ, իսկ Երևանում (Երևանի քաղաքապետարանի) Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժիններ (համաձայնությամբ), Միջազգային և հասարակական կազմակերպություններ | Վերակազմակերպման գործընթացը սկսելուց հետո՝ 2 ամիս: | ԱՄՆ միջազգային զարգացման գործակալություն ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ, այլ աղբյուրներ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | երեխայի համար անհատական սոցիալական ծրագրի մշակում: | | | | | |
| 2. | Հաստատություններում գտնվող երեխաների բնակության համայնքներում ընտանիքներին և երեխաներին ուղղված ծառայությունների քարտեզագրում: | Գնահատված են հաստատություններում գտնվող երեխաների բնակության համայնքներում ընտանիքներին և երեխաներին տրամադրվող ծառայությունները: | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչություն | Սոցիալական աջակցության տարածքային գործակալություն (բաժին), Մարզպետարաններ, իսկ Երևանում (Երևանի քաղաքապետարանի) Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժիններ (համաձայնությամբ), միջազգային , հասարակական կազմակերպություններ | Վերակազմակերպման գործընթացը սկսելուց հետո՝ 1 ամիս: | ԱՄՆ միջազգային զարգացման գործակալություն ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ, այլ աղբյուրներ |
| 3. | Դեպք վարողների և սոցիալական աշխատողների վերապատրաստումների իրականացում: | Դեպք վարողների և սոցիալական աշխատողների կարողությունները զարգացել են: | ՀՀ աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ | Միջազգային, հասարակական կազմակերպություններ | Պարբերաբար | ՀՀ պետ բյուջե, ԱՄՆ միջազգային զարգացման գործակալություն |
| 4. | Մշակել հաստատությունների) վերակազմակերպմանն ուղղված իրավական ակտերի նախագծերը | Հաստատված են հաստատությունների վերակազմակերպման | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի | | Գնահատման գործընթացը ամփոփելուց | Ֆինանսավորում չի պահանջում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | և ներկայացնել ՀՀ կառավարության հաստատմանը: | գործընթացն ապահովող իրավական ակտերը: | նախարարության աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչություն | | հետո՝ 1 ամիս: | |
| 5. | Հանրային իրազեկման աշխատանքներ մարզային և ազգային մակարդակներում: | Իրականացվել են մամուլի ասուլիսներ, հանրային լսումներ, համայնքային իրազեկումներ, ՀԿ ֆորումներ, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների ծնողները իրազեկվել են ոլորտում իրականացվող բարեփոխումների, այլընտրանքային ծառայությունների մասին: | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչություն | Միջազգային, հասարակական կազմակերպություններ | Պարբերաբար | ՀՀ պետ բյուջե, ԱՄՆ միջազգային զարգացման գործակալություն ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ, այլ աղբյուրներ |
| 6. | Անհատական սոցիալական ծրագրի իրականացում (ներառյալ ընտանիքներին աջակցության փաթեթների տրամադրում): | Նախարարության կողմից ղեկավարվող և սոցիալական աջակցության տարածքային գործակալություն և այլ գործընկերների ներկայացուցիչներից կազմված խումբը դեպք առ դեպք վերլուծել է երեխաների | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչություն | Սոցիալական աջակցության տարածքային գործակալություն (բաժին), միջազգային, հասարակական կազմակերպություններ | Գնահատման գործընթացից սկսած՝ առնվազն 1 տարի: | ԱՄՆ միջազգային զարգացման գործակալություն ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ, այլ աղբյուրներ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | անհատական սոցիալական աջակցության պլանները, ընտանիք վերադարձած բոլոր երեխաներին տրամադրվում է իրենց անհատական սոցիալական ծրագրին համապատասխան ծառայություններ՝ ներառյալ աջակցության փաթեթներ: | | | | |
| 7. | Երեխաների ուղղորդում գործող այլընտրանքային ծառայություններ (առկայության դեպքում): | Երեխաները տեղավորված են ընտանիքներում ըստ անհրաժեշտության համապատասխան ծառայություններ ստանում են տարբեր կենտրոններում: | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչություն | Սոցիալական աջակցության տարածքային գործակալություն (բաժին), Մարզպետարան ների, իսկ Երևանում (Երևանի քաղաքապետար անի) Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանությա ն բաժիններ (համաձայնությա մբ) | Պարբերաբար | Ֆինանսավորում ան կարիք չկա |
| 8. | Հաստատության անձնակազմի գնահատում և նոր ծառայության համար անհրաժեշտ | Առկա է կազմակերպության նոր հաստիքացուցակ: | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի | Միջազգային, հասարակական կազմակերպությո | Գնահատման գործընթացից սկսած՝ 2 ամիս: | ԱՄՆ միջազգային զարգացման |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | հաստիքացուցակի վերաբերյալ առաջարկի ներկայացում: | | նախարարության աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչություն | ւններ | | գործակալությո ւն, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ, այլ աղբյուրներ |
| 9. | Վերակազմակերպման շրջանակում մասնագիտական թիմի կարողությունների գնահատում և արդյունքների ամփոփում | Գնահատված են մասնագիտական թիմի կարողությունները: | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչություն | Միջազգային, հասարակական կազմակերպությո ւններ | Հաստատությա ն անձնակազմի գնահատումից և նոր ծառայության համար անհրաժեշտ հաստիքացուց ակի վերաբերյալ առաջարկի ներկայացումից հետո 20 օր: | ԱՄՆ միջազգային զարգացման գործակալությո ւն, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ, այլ աղբյուրներ |
| 10. | Հաստատության անձնակազմի հմուտ մասնագետների ընտրություն և վերապատրաստում: | Համապատասխան մասնագետները վերապատրաստված են տրամադրվող նոր ծառայությունների պահանջներին համապատասխան մեթոդաբանությամբ: | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչություն | Աշխատանքի և սոցիալական հետազոտություն ների ազգային ինստիտուտ, Միջազգային, հասարակական կազմակերպությո ւններ | Կազմակերպու թյան վերակազմակե րպման իրավական ակտի ընդունումից հետո՝ 1 ամիս մասնագետներ ի ընտրություն, իսկ վերապատրաս տումները պարբերաբար: | ԱՄՆ միջազգային զարգացման գործակալությո ւն, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ, այլ աղբյուրներ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 11. | Երեխաների վերադարձը կենսաբանական կամ խնամակալ ընտանիքներ: | Երեխաները խնամվում են ընտանիքներում: | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչություն | Սոցիալական աջակցության տարածքային գործակալություն (բաժին) | Կազմակերպության վերակազմակերպման իրավական ակտի ընդունումից հետո՝ պարբերաբար: | Ֆինանսավորման կարիք չկա |
| 12. | Շուրջօրյա հաստատություններում գտնվող երեխաների կենսաբանական ընտանիք վերադարձի, իսկ դրա անհնարինության դեպքում այլընտրանքային խնամքի ապահովում՝ համաձայն երեխայի անհատական ծրագրի: | Երեխաները գտնվում են կենսաբանական ընտանիքում կամ ներկայացվել են որդեգրման, խնամակալության, խնամատարության: | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչություն | Միջազգային, հասարակական կազմակերպություններ | Կազմակերպության վերակազմակերպման իրավական ակտի ընդունումից հետո՝ պարբերաբար: | ՀՀ պետական ֆինանսավորում, այլ աղբյուրներ |
| 13. | Ծառայություններ մատուցող մարմինների մշտադիտարկում և գնահատում (ներառյալ համապատասխան գործիքների մշակումը վերակազմակերպվող յուրաքանչյուր թիրախային հաստատության համար՝ անցումային գործընթացը վերահսկելու համար), կանոնավոր տունայցեր: | Գնահատված են մատուցող ծառայությունները, իրականացված գործընթացը վերահսկվում է: | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչություն | Սոցիալական աջակցության տարածքային գործակալություն (բաժին) Միջազգային, հասարակական կազմակերպություններ | Պարբերաբար | ԱՄՆ միջազգային զարգացման գործակալություն, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ, Այլ աղբյուրներ |
| 14. | Նոր ծառայության հաստիքացուցակի մշակում և հաստատում: | Հաստատված հաստիքացուցակ: | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների | | Կազմակերպության վերակազմակերպման իրավական ակտի ընդունումից | Ֆինանսավորում չի պահանջում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | հիմնահարցերի վարչություն | | հետո՝ 20 օր: | |
| 15. | Նոր ծառայության անձնակազմի պաշտոնի անձնագրերի մշակում և հաստատում: | Հաստատված պաշտոնի անձնագրեր: | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչություն | | Կազմակերպության վերակազմակերպման իրավական ակտի ընդունումից հետո՝ 1 ամիս: | Ֆինանսավորում չի պահանջում |
| 16. | Նոր ծառայության անձնակազմի ընտրություն՝ հաստատված աշխատանքային նկարագրերի և ընտրության չափանիշների հիման վրա: | Ծառայությունները տրամադրվում են վերաորակավորված և վերապատրաստված անձնակազմի կողմից: | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչություն | Միջազգային, հասարակական կազմակերպություններ | Կազմակերպության վերակազմակերպման իրավական ակտի ընդունումից հետո՝ 1 ամիս: | Ֆինանսավորում չի պահանջում |
| 17. | Շենքի սեյսմիկ գնահատում (անհրաժեշտության դեպքում), վերանորոգման պլանի մշակում և հաստատում, կապալառուի ընտրություն: | Առկա է վերանորոգման պլանը: | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչություն | Միջազգային, հասարակական կազմակերպություններ | Կազմակերպության գնահատման գործընթացը ավարտելուց հետո՝ 1 ամիս: | ԱՄՆ միջազգային զարգացման գործակալություն, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ, այլ աղբյուրներ |
| 18. | Կառուցապատման/վերանորոգման աշխատանքների իրականացում: | Ընտրված կապալառու ընկերությունը իրականացրել է վերանորոգման աշխատանքները, | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ընտանիքի, կանանց | Միջազգային, հասարակական կազմակերպություններ, | Վերանորոգման պլանի հաստատումից հետո՝ ըստ անհրաժեշտության մինչև 6 | ԱՄՆ միջազգային զարգացման գործակալություն, ՄԱԿ-ի |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | ծառայությունները մատուցվում են բարելավված շենքային պայմաններում: | և երեխաների հիմնահարցերի վարչություն | | ամիս: | մանկական հիմնադրամ, այլ աղբյուրներ |
| 19. | Սարքավորումների և կահավորանքի մատակարար ընկերությունների ընտրություն, սարքավորումների և կահավորանքի գնում: | Ծառայությունները մատուցվում են բարելավված պայմաններում: | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչություն | Միջազգային, հասարակական կազմակերպություններ, | Պարբերաբար | ԱՄՆ միջազգային զարգացման գործակալություն, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ, այլ աղբյուրներ |
| 20. | Նորընտիր անձնակազմի կարողությունների հզորացում՝ նոր գործառույթները իրականացնելու նպատակով: | Վերապատրաստված անձնակազմ: | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչություն | Միջազգային, հասարակական կազմակերպություններ, | Պարբերաբար | ԱՄՆ միջազգային զարգացման գործակալություն, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ, այլ աղբյուրներ |
| 21. | Անցումային աջակցություն հաստատության վերակազմակերպման արդյունքում գործազուրկ դարձած անձնակազմին: | Գործազուրկ դարձած անձնակազմը աշխատանքի ընտրության հարցում կողմնորոշվել է, վերապատրաստվել, անցել մասնագիտական դասընթացներ: | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչություն | Միջազգային, հասարակական կազմակերպություններ | Պարբերաբար | ԱՄՆ միջազգային զարգացման գործակալություն, այլ աղբյուրներ |
| 22. | Ընտանիքի աջակցության կենտրոնի ծառայությունների կարիքն ունեցող՝ մերձակա համայնքներում բնակվող | Երեխաները ըստ կարիքի ստանում են համապատասխան ծառայություններ: | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության | Սոցիալական աջակցության տարածքային գործակալություն | Կազմակերպության վերակազմակերպման | ԱՄՆ միջազգային զարգացման գործակալությո |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | երեխաների բացահայտում և նոր կենտրոն ընդունվող երեխաների կարիքների գնահատում: | | աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչություն | (բաժին) | իրավական ակտի ընդունումից հետո՝ պարբերաբար: | ւն, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ |
| 23 | Կենտրոնը տրամադրում է սոցիալական ծառայություններ յուրաքանչյուր երեխայի համար մշակված անհատական սոցիալական ծրագրերի համաձայն: | Երեխաները ըստ կարիքի ստանում են համապատասխան ծառայություններ: | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչություն | Պետական ոչ առևտրային կազմակերպությու ն | Կազմակերպու թյան վերակազմակե րպման իրավական ակտի ընդունումից հետո՝ պարբերաբար: | ՀՀ պետական բյուջե |